ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԵԾԱԾԱԽ ԱՌԵՎՏՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅՈՒՆԸ

ՌԱԴԻԿ ՄԻՐԶՈՅԱՆ

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացման պայմաններում արտադրության միջոցների մեծածախ առևտրի ծավալումն ուղղված է հասարակական արտադրության արդյունավետության բարձրացմանը, արտադրության աճի ինտենսիվ գործոնների բազմակողմանի օգտագործմանը, հետևապես և սոցիալիստական ընդլայնված վերարտադրության տեմպերի արագացմանը։ Ժողովրդական տնտեսության նյութատեխնիկական մատակարարման կատարելագործման կարևոր ուղղություններից մեկն արտադրության միջոցների մեծածախ առևտրի զարգացումն է։ Անցումն արտադրության միջոցների մեծածախ առևտրին ենթադրում է ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանների վրա հիմնված արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի մատակարարման նոր ձևերի և մեթոդների օգտագործում, որոնք համապատասխանում են տնտեսության զարգացման ներկայիս պահանջներին։

Նյութատեխնիկական մատակարարման կատարելագործումը շատ բանով կախված է արտադրատեխնիկական նշանակության մասսայական արտադրանքի մեծածախ առևտրի զարգացումից, որն իրականացվում է մատակարարման-իրացման կազմակերպությունների բազաների, պահեստների և խանութների կողմից։ ՍՄԿԿ XXIV համագումարում հատուկ նշվեց մեծածախ առևտրի հետագա զարգացման անհրաժեշտության մասին. «Ռեսուրսների մեծացման համեմատ մենք կկարողանանք զարգացնել արտադրամիջոցների մեծածախ առևտուրը։ Դա կընդլայնի ձեռնարկությունների ու միավորումների ինքնուրույնությունը և նախաձեռնությունը ռացիոնալ տնտեսական կապերի ընտրության գործում, կնպաստի նյութական ռեսուրսների խնայողությանը, աշխատանքի բարելավմանը և մատակարարման ապարատի կրճատմանը»[1]։

Ժողովրդական տնտեսության նյութատեխնիկական մատակարարման կարգավորման գործում կարևոր քայլ էր ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. սեպտեմբերյան պլենումի որոշումը՝ երկրում նյութատեխնիկական մատակարարման միասնական պետական համակարգ ստեղծելու մասին։ Պլենումում Ա. Ն. Կոսիգինը, խոսելով ժողովրդական տնտեսության մատակարարման բարելավման մասին, նշեց, որ «հետագայում նյութատեխնիկական մատակարարման ասպարեզում պետք է ավելի լայնորեն զարգացնել արտադրող ձեռնարկությունների և սպառող ձեռնարկությունների ուղղակի կապերը։ Անհրաժեշտ է աստիճանաբար անցնել սպառման շրջանների մատակարարման-իրացման

---

1 «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 225։

տերիտորիալ բազաների միջոցով նյութերի և սարքավորումների առանձին տեսակների մեծածախ առևտրին»[2]։

Նյութական ռեսուրսների գերակշռող մասի կենտրոնացված հարկադրական բաշխման գործում նկատվում էին լուրջ թերություններ։ Վաղուց արդեն հասունացել էր ժամանակը՝ արտադրության միջոցների խիստ ֆոնդային բաշխումից աստիճանաբար անցում կատարելու մեծածախ առևտրին։ ՍՄԿԿ XXV համագումարում հատուկ նշվեց, որ անհրաժեշտ է «շարունակել մեծածախ առևտրի զարգացման աշխատանքը տերիտորիալ մատակարարման-վաճառահանման կազմակերպությունների բազաների, պահեստների և խանութների միջոցով։ Կատարելագործել պահեստային տնտեսությունը»[3]։

Արտադրության միջոցների մեծածախ առևտրի զարգացումը կոչված է առաջին հերթին ծառայելու ժողովրդական տնտեսության մեջ նկատվող որոշ արտադրատեսակների արհեստական դեֆիցիտայնության վերացմանը։ ՍՄԿԿ XXVI համագումարում նշվեց, որ «կա մի շարք ռեսուրսների դեֆիցիտայնությունը հաղթահարելու կամ, համենայն դեպս, մեղմացնելու ևս մեկ, ոչ փոքր ռեզերվ։ Դա արտադրական պաշարների ճիշտ կառավարումն է։ Չի կարելի հաշտվել այն բանի հետ, որ շատ ձեռնարկություններ իրենց մոտ պահում են գերնորմատիվային սարքավորումներ, հումք և նյութեր, հատկապես մետաղ, մինչդեռ դրանք չեն բավականացնում այլ ձեռնարկությունների։ ...Հարկավոր է ուժեղացնել ՍՍՀՄ պետմատի և նրա տերիտորիալ մարմինների դերը, բարձրացնել նրանց պատասխանատվությունը նյութական ռեսուրսներով մանևրելու և դրանք ռացիոնալ օգտագործելու ասպարեզում։ Պետմատի տնտեսական շրջաններում եղած բազաները մենք չենք կարող դիտել որպես պարզապես պահեստներ։ Դրանք պետք է նախապատրաստեն և տեսակավորեն նյութերը և օպերատիվ կերպով դրանք մատակարարեն սպառողներին, այն էլ՝ անհրաժեշտ տեսականիով և կոմպլեկտով»[4]։

Արտադրության միջոցների մեծածախ առևտուրը կազմակերպվում է ՍՍՀՄ պետմատի կողմից և ժողովրդական տնտեսության զարգացման պետական պլանների հիման վրա ապահովում անհրաժեշտ քանակի, տեսականու և որակի արտադրանքի անընդմեջ ու համաչափ մատակարարումը սպառողներին, նպաստում նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը և սպառողներին ցույց տրվող ծառայությունների ընդլայնմանը։

Արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի մեծածախ առևտուրն իրականացվում է երկու ձևով՝ ուղղակի տևական տնտեսական կապերի և նյութատեխնիկական մատակարարման տերիտորիալ կազմակերպությունների բաշխմանը տրված արտադրանքի իրացման միջոցով[5]։

Ինչպես տեսնում ենք, տնտեսագիտական գրականության մեջ արտադրության միջոցների մեծածախ առևտրի էության և բովանդակության մասին միասնական հարցադրում գոյություն չունի։ Վեճը հատկապես այն

---

2 Ա. Ն. Կոսիգին, Արդյունաբերության կառավարումը բարելավելու, պլանավորումը կատարելագործելու և արդյունաբերական արտադրության տնտեսական խթանումն ուժեղացնելու մասին, Երևան, 1965, էջ 51։

3 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 257։

4 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 204։

5 «Положение об оптовой торговле продукцией производственно-технического назначения. Утверждено постановлением Госснаба СССР от 15 апреля 1975 г. № 30».

հարցի շուրջն է, թե ուղղակի տևական տնտեսական կապերը մտնո՞ւմ են արդյոք մեծածախ առևտրի մեջ բառիս ամենալայն իմաստով, թե արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի մատակարարման առանձին, ինքնուրույն ձև են։ Տնտեսագետների մի մասը գտնում է, որ ուղղակի տևական տնտեսական կապերն ի տարբերություն նախկին անդեմ, առանց պայմանագրերի ֆոնդային մատակարարումների, ձեռնարկությունների ավելի զարգացած ապրանքադրամական տնտհաշվարկային հարաբերություններ են, որոնք թույլ են տալիս դրանք դիտել որպես մեծածախ առևտուր[6]։ Ն. Դրոգիչինսկու կարծիքով արտադրության միջոցների մեծածախ առևտուրը դրանց պլանային բաշխման ձևերից է՝ մատակարարի և սպառողի միջև պլանաչափորեն կազմակերպված ուղղակի տևական կապերի և երկարատև պայմանագրերի հիման վրա՝ անմիջականորեն կամ միջնորդի միջոցով[7]։ Տնտեսագետների մյուս մասը գտնում է, որ արտադրողական ուժերի զարգացման բավական բարձր մակարդակի ապահովման հետևանքով ուղղակի տևական կապերը դառնում են անհրաժեշտ և հնարավոր՝ ինչպես մեծածախ առևտրի, այնպես էլ նյութական ռեսուրսների ֆոնդային բաշխման ժամանակ։ Այդ իսկ պատճառով էլ, նրանց կարծիքով, ճիշտ չէր լինի այդպիսի կապերի գործողությունն առնչել միայն մեծածախ առևտրի հետ։ Ուղղակի տնտեսական կապերը հնարավոր է կիրառել նյութական ռեսուրսների պլանային բաշխման տարբեր ձևերի ժամանակ[8]։ Բ. Պուգինսկին նշում է, որ ուղղակի տևական տնտեսական կապերով մատակարարումները մեծածախ առևտրի տեսակներից մեկը հայտարարելը կրում է զուտ ձևական բնույթ, քանի որ մատակարարների և գնորդների հարաբերությունների էությունը դրանից չի փոխվում[9]։ Ա. Լևինը կտրականապես դեմ է ուղղակի տևական տնտեսական կապերն արտադրության միջոցների մեծածախ առևտրի մեջ մտցնելուն։ Նա գտնում է, որ արտադրության միջոցների իրացումն ուղղակի կապերի միջոցով, որոնք անմիջականորեն իրականացվում են արտադրողների և սպառողների միջև, մեծածախ առևտրի ձևերին վերագրելը ճիշտ չէ։ Առևտուրը ոչ այլ ինչ է, քան ապրանքային շրջանառության առանձնացումն ինքնուրույն գործունեության ճյուղի։ Միաժամանակ, առևտուրը չի ընդգրկում շուկայում իրականացվող առք ու վաճառքի բոլոր գործարքները։ Դրանց մի մասն իրացվում է ուղղակի կապերի ձևով։ Ուստի, եզրակացնում է նա, քանի որ ուղղակի կապերի պայմաններում ձեռնարկությունների միջև իրացումը կատարվում է առանց միջնորդ օղակի մասնակցության, ապա տվյալ դեպքում տեղի չի ունենում ապրանքային շրջանառության ոլորտի առանձնացում առևտրի ձևով։ Դրա համար էլ արտադրողների և սպառողների միջև ուղղակի կապերի միջոցով արտադրության միջոցների իրացումը ոչ միայն մեծածախ առևտրի ձև չէ, այլև ընդհանրապես ոչ մի առնչություն չունի առևտրի հետ, որպես այդպիսին։ Հետևաբար, ուղղակի կապերն ապրանքային շրջանառության սովորական ձև

---

[6] Н. Лобачев, Важный резерв повышения эффективности производства («Коммунист», 1972, № 6, с. 68).

[7] Н. Е. Дрогичинский, Об оптовой торговле средствами производства («Вопросы экономики», 1974, № 4, с. 28—29).

[8] «Прогрессивные формы хозяйственных связей», Киев, 1977, с. 33.

[9] Б. И. Пугинский, Правовые средства обеспечения эффективности производства, М., 1980, с. 80.

են, այսինքն ապրանքադրամական փոխանակություն, որն իրականացվում է արտադրողների և սպառողների միջև՝ առանց միջնորդների[10]։

Նախ, դժվար է համաձայնել հեղինակի այն հարցադրման հետ, թե ուղղակի կապերն իրականացվում են առանց միջնորդ օղակի մասնակցության։ Ժողովրդական տնտեսության պլանային կառավարման պայմաններում մատակարարի և գնորդի ազատ ընտրության մասին խոսք լինել չի կարող։ Ուղղակի տեսական տնտեսական կապերով մատակարարումների դեպքում գնորդի ամրակցումը մատակարարին կատարվում է ՍՍՀՄ պետմատի մասնագիտացված վարչությունների կամ մատակարարման տերիտորիալ մարմինների կողմից։ Բացի այդ, հաստատվում է արտադրանքի մատակարարումների ընդհանուր ծավալը՝ խմբային խոշորացված անվանացանկով։ Ինչպես տեսնում ենք, պլանային տնտեսության պայմաններում ուղղակի կապերին միջնորդ օղակի մասնակցությունը տնտեսական անհրաժեշտություն է։

Մյուս կողմից, ուղղակի տեսական տնտեսական կապերով արտադրության միջոցների մատակարարումը տեղի է ունենում ապրանքային շրջանառության ոլորտում, դրամական փոխանակության պայմաններում։ Ուստի, ուղղակի տեսական տնտեսական կապերն ընդհանրապես մեծածախ առևտրին վերագրելը տնտեսապես հիմնավորված է։ Այստեղ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նյութատեխնիկական մատակարարման համակարգը ոմանք երբեմն հակադրում են բուն առևտրի հասկացությանը՝ էական տարբերություններ տեսնելով դրանց միջև[11]։ Մինչդեռ, զարգացած սոցիալիզմի պայմաններում նյութատեխնիկական մատակարարումը սոցիալիստական առևտրի ձևերից է, որը զբաղվում է արտադրության միջոցների բաշխման և իրացման հարցերով։

Տնտեսագիտական գրականության մեջ «արտադրության միջոցների ապրանքային շրջանառություն» և «արտադրության միջոցների մեծածախ առևտուր» հասկացությունները նույնացվում են։ Այսպես, Վ. Իվանիցկին գրում է. «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ մեծածախ առևտուրն իրականացվում է արտադրության միջոցների նյութատեխնիկական մատակարարման և իրացման, գյուղատնտեսական մթերքների և հումքի գնումների և իրացման, ժողովրդական սպառման ապրանքների վաճառքի ձևով»[12]։ Առևտրի էկոնոմիկայի դասագրքում կարդում ենք. «մեծածախ առևտուրը հանդես է գալիս որպես ներքին շուկայի կազմակերպված ձև, որն ընդգրկում է արտադրության միջոցների, գյուղատնտեսական արտադրանքի և սպառման առարկաների իրացումը»[13]։

Հարկ է նշել, որ արտադրության միջոցների շրջանառությունն ամբողջությամբ վերցրած մեծածախ առևտուր է բառիս ուղղակի իմաստով։ Ապրանքներն արտադրության ոլորտից մինչև կոնկրետ սպառողին հասնելը, լինեն դրանք ժողովրդական սպառման առարկաներ կամ արտադրության միջոցներ, անցնում են մեծածախ կամ մանրածախ առևտրի միջոցով։ Այս առումով արտադրության միջոցների շրջանառությունը, քանի որ այն տեղի է ունենում սոցիալիստական ձեռնարկությունների, կազմակերպությունների

---

10 А. И. Левин, Социалистический внутренний рынок, М., 1973, с. 47—48.

11 Е. А. Хруцкий, В. А. Сакович, С. П. Колосов, Оптимизация хозяйственных связей и материальных запасов, М., 1977, с. 20.

12 В. И. Иваницкий, Экономика торговли, Киев, 1978, с. 227.

13 «Экономика торговли», М., 1975, с. 199.

միջև, մեծածախ առևտրի բնագավառ է։ Մյուս կողմից, մեր երկրում արտադրության միջոցների շրջանառության զարգացման առանձնահատկությունների հետևանքով դրանց բաշխման և շրջանառության պրոցեսում երկար ժամանակ առկա էր միայն ֆոնդային բաշխման համակարգը, երբ արտադրանքի բաշխումը և իրացումը տեղի էր ունենում խիստ կենտրոնացված կարգով։ Այս դեպքում արտադրանքի բաշխումը նախ կատարվում է բազմաստիճանության պայմաններում (ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդ, ՍՍՀՄ պետպլան, ՍՍՀՄ պետմատ, ՍՍՀՄ մինիստրություններ և գերատեսչություններ, միութենական հանրապետությունների մինիստրների խորհուրդներ և այլն)։ Խոշոր սպառողներին առանձնացվում է արտադրանքի որոշակի քանակություն (ֆոնդ), այնուհետև տեղերին իջեցվում են կարգագրեր և լիմիտներ, որոնց շրջանակներում արտադրողները և սպառողները մտնում են տնտեսական կապերի մեջ։

Մինչև 1965 թ. տնտեսական բարեփոխումն արտադրության միջոցների շրջանառությունն իրականացվում էր կենտրոնացված ֆոնդավորման ճանապարհով, որը դրական դեր է խաղացել սոցիալիստական ընդլայնված վերարտադրության իրականացման գործում։ Ներկայումս արտադրության միջոցների ֆոնդային բաշխումը սահմանափակում է արտադրական միավորումների, ձեռնարկությունների նախաձեռնությունը և տնտեսական ինքնուրույնությունը, շատ հարցերում խոչընդոտում է տնտհաշվարկային հարաբերությունների զարգացումը (միավորումները և ձեռնարկությունները հարկադրված են լինում կուտակել ավելորդ արտադրական պաշարներ, մեծանում են մատակարարման շրջանառության ծախքերը և այլն)։ Արտադրության միջոցների ֆոնդային բաշխման ժամանակ հաճախ չեն բավարարվում միավորումների, ձեռնարկությունների իրական պահանջները, երբեմն էլ դրանք վեր են ածվում ավելցուկային պաշարների։ Ամբողջությամբ վերցրած, բաշխման այդ ձևը սահմանափակում է տեղերի իրավունքը՝ նյութական ռեսուրսներով մանևրելու գործում։ Արտադրանքի ֆոնդային բաշխման համակարգի պայմաններում արտոնյալ վիճակում է գտնվում մատակարարը, քանի որ կարողանում է իր կամքը թելադրել գնորդին։ Այս դեպքում գրեթե անհնար է ժամանակին հաշվի առնել ժողովրդական տնտեսության պահանջների արագ փոփոխությունները և լրիվ բավարարել դրանք։

Արտադրության միջոցների մեծածախ առևտրի ծավալումը և կատարելագործումը հիմնականում ուղղված է սպառողների նախաձեռնության զարգացմանը և իրավունքների ընդլայնմանն այն հաշվով, որպեսզի լրիվ բավարարվեն նրանց պահանջներն անհրաժեշտ քանակի, տեսականու և որակի արտադրանքի նկատմամբ։ Արտադրության միջոցների մեծածախ առևտրի զարգացումը կապվում է ՍՄԿԿ Կենտկոմի 1965 թ. սեպտեմբերյան պլենումի որոշումների հետ։ Կենտրոնացված ֆոնդային մատակարարման հետ մեկտեղ կիրառության մեջ մտավ արտադրության միջոցների իրացումը մեծածախ առևտրի ճանապարհով։ Հետագայում աստիճանաբար արտադրության միջոցների բաշխման և իրացման այս ձևն անվանվեց «արտադրության միջոցների մեծածախ առևտուր», որը, մեր կարծիքով, շատ ընդհանուր է և լրիվ չի արտահայտում արտադրության միջոցների շրջանառության այդ ձևի ուրույն առանձնահատկությունները։ Ճիշտ կլիներ այն առանձնացնել և անվանել «արտադրության միջոցների ոչ ֆոնդային իրացում»։

Մեզ թվում է, որ արտադրության միջոցների մեծածախ առևտուրն ընդգրկման տեսակետից շատ ավելի ընդհանուր տնտեսական կատեգորիա լինելով հանդերձ, ներառում է արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի բաշխման և իրացման բոլոր ձևերն անխտիր։

Արտադրության միջոցների բաշխման և շրջանառության պրոցեսի իրականացման գործում որոշիչ դեր է խաղում նյութական ռեսուրսների պլանային բաշխման համակարգը։ Սովորաբար այն բաժանվում է կենտրոնացված և ապակենտրոնացված ձևերի։ Նյութական ռեսուրսների բաշխման ապակենտրոնացված ձևը ներառում է արտադրանքի բաշխումը, որն իրականացնում են նյութատեխնիկական մատակարարման տերիտորիալ մարմինները, մատակարարման գերատեսչական մարմինները, ինչպես նաև անմիջականորեն արտադրական միավորումները և ձեռնարկությունները։ Արտադրության միջոցների ոչ ֆոնդային իրացման հետագա զարգացումը հիմնականում կախված է ապակենտրոնացված կարգով բաշխվող նյութական ռեսուրսների անվանացանկի ընդլայնումից և նրա մեջ նոր արտադրատեսակների ընդգրկումից։

Նյութական ռեսուրսների հաշվեկշիռները և բաշխման պլանները կազմելիս նպատակահարմար է առաջնորդվել այն սկզբունքով, որպեսզի հնարավորության սահմաններում ընդլայնվի այն արտադրատեսակների անվանացանկը, որն իրացվելու է առանց ֆոնդավորման, հիմնականում սպառողների ներկայացրած պատվերների հիման վրա։

Արտադրության միջոցների ոչ ֆոնդային իրացման զարգացման հիմնական տնտեսական նախադրյալը նյութական ռեսուրսների ընդհանուր ծավալի և դրանց նկատմամբ եղած պահանջմունքների հավասարակշռվածությունն է։ Սակայն ներկայումս շատ հաճախ արտադրության պլանային առաջադրանքների և նյութական ռեսուրսների մատակարարման պլանների միջև բացակայում է անհրաժեշտ կապը։

Տնտեսագիտական գրականության մեջ արտադրության միջոցների մեծածախ առևտրի ձևերը բնութագրելիս հանդիպում ենք մի շարք դասակարգումների, որոնք հիմնականում հանգում են հետևյալին. ա) արտադրանքի վաճառքը մատակարարման-իրացման կազմակերպությունների բազաների, պահեստների, խանութների միջոցով և տրանզիտային մատակարարումները լիմիտներով, բ) արտադրանքի վաճառքն առանց լիմիտների, գ) արտադրանքի իրացումը ուղղակի տևական տնտեսական կապերով։ Որոշ հեղինակներ առանձնացնում են նաև արտադրության միջոցների ազատ առևտուրը[14] կամ մանրամեծաքանակ կոմիսիոն առևտուրը[15], որպես մեծածախ առևտրի ինքնուրույն ձևեր, որոնք, մեր կարծիքով, իրենց տնտեսական բովանդակությամբ էականորեն չեն տարբերվում լիմիտավորված մեծածախ առևտրի առանձնահատկություններից և կազմակերպական առումով մտնում են վերջինիս մեջ։

Մեծածախ առևտուրը որպես այդպիսին ընդգրկում է նյութատեխնիկական մատակարարման տերիտորիալ մարմինների բաշխմանը տրված արտադրանքի ամբողջ անվանացանկը։ Ընդ որում, այդ անվանացանկը 1978 թ. ընդգրկում էր շուրջ 12 հազ. անուն արտադրանք, որը ապակենտրոնացված

---

[14] Н. Е. Дрогичинский, նշվ. աշխ., էջ 31։

[15] Е. А. Хруцкий, В. А. Сакович, С. П. Колосов, նշվ. աշխ., էջ 18—19։

կարգով սպառողներին են բաշխել նյութատեխնիկական մատակարարման տերիտորիալ մարմինները[16]։

Լիմիտավորված և չլիմիտավորված մեծածախ առևտրում արտադրանքի բաշխումը և իրացումը կատարվում է հետևյալ հաջորդականությամբ. սահմանվում է արտադրանքի լիմիտ կամ ցանկ, որի շրջանակներում կողմերը փոխհարաբերությունների մեջ են մտնում։ Առանձնացված լիմիտի կամ ցանկի հիման վրա սպառող կազմակերպությունները ներկայացնում են իրենց պատվերները, այնուհետև կնքվում են համապատասխան պայմանագրեր։ Լիմիտավորված մեծածախ առևտրում պլանով անմիջականորեն սահմանվում է կոնկրետ պայմանագրի առարկան և մասնակիցների կազմը։ Լիմիտավորված մեծածախ առևտրի դեպքում սպառողին իրավունք է վերապահվում նյութատեխնիկական մատակարարման տերիտորիալ մարմնից ցանկացած քանակությամբ պահանջելու իրեն անհրաժեշտ նյութերը, իհարկե, լիմիտի շրջանակներում։ Մատակարարման այս ձևը սպառողին լայն հնարավորություններ է տալիս, ելնելով արտադրատնտեսական գործունեության ընթացքից, ստեղծված իրադրությունից, սեփական հայեցողությամբ բազաներից կամ խանութներից պահանջել անհրաժեշտ քանակի և որակի արտադրանք։ Սովորաբար (ֆոնդային) մատակարարման դեպքում սպառողին առանձնացվում են նյութական ռեսուրսների տարեկան ֆոնդեր եռամսյակային կտրվածքով, երբեմն էլ բաշխված ըստ ամիսների։ Առանձնացված ֆոնդերին համապատասխան արտադրողը պարտավոր է նշված ժամկետներում իրականացնել մատակարարումը՝ անկախ սպառողի մոտ տիրող իրավիճակից։ Մինչդեռ մեծածախ առևտրի դեպքում սպառողը հնարավորություն ունի տվյալ պահին իր կոնկրետ պահանջները ներկայացնել նյութատեխնիկական մարմնին՝ պահանջելով արտադրանքի մատակարարումները կատարել այս կամ այն ժամկետում կամ պահանջարկի բացակայության պատճառով լրիվ հրաժարվել դրանից։

Արտադրության միջոցների վաճառքն առանց լիմիտի իրականացվում է հիմնականում ապակենտրոնացված գնումների հաշվին, որն արտադրության միջոցների ընդհանուր շրջանառության մեջ աննշան մաս է կազմում։ Առանց լիմիտի իրացման նպատակով կոնկրետ արտադրատեսակների ընտրությունը կատարվում է՝ հիմք ընդունելով նյութական ռեսուրսների և դրանց նկատմամբ եղած պահանջմունքների հավասարակշռվածության աստիճանը։ Որպես կանոն, այն արտադրատեսակները, որոնք լրիվ բավարարում են ներկայացվող պահանջները, այսինքն դեֆիցիտային չեն, պետք է վաճառվեն առանց լիմիտի։ Այն արտադրատեսակների կոնկրետ ցանկը, որը ենթակա է իրացման առանց լիմիտի՝ յուրաքանչյուր տարվա համար որոշում և հաստատում են նյութատեխնիկական մատակարարման գլխավոր և տեղական վարչությունները՝ հաշվի առնելով տեղերի տնտեսական պայմանները և ռեսուրսների նկատմամբ պահանջմունքների բավարարման աստիճանը։ Ամեն տարի տվյալ տնտեսական շրջանի սպառող կազմակերպությունները հիմք ընդունելով առանձնացված ցանկը, կարող են ներկայացնել իրենց պատվերները։ Չլիմիտավորված մեծածախ առևտրի ժամանակ արտադրանքի իրացման ծավալը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ցանկով

---

16 «Экономика, организация и планирование материально-технического снабжения и сбыта», М., 1980, с. 93.

սահմանված քանակության շրջանակներում։ Անլիմիտ արտադրանքի մեծածախ վաճառքը ներկայումս ընդգրկում է ամբողջ շրջանառության մոտ 10%-ը։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բավարար պայմաններ կան զգալիորեն ընդլայնելու անլիմիտ արտադրանքի մատակարարումների ծավալը։ Ենթադրվում է, որ արտադրության միջոցների անլիմիտ մեծածախ վաճառքը բարձրացնում է նյութական ռեսուրսների կենտրոնացված պլանային բաշխման դերն այն հաշվով, որ այդ աշխատանքները հիմնականում կատարվում են նյութատեխնիկական մատակարարման տերիտորիալ մարմիններում, որոնք ավելի մոտ են գտնվում արտադրողներին և սպառողներին։ Ընդ որում, այս դեպքում կենտրոնացված կարգով արդեն նախօրոք պլանավորված և բաշխված են լինում խոշոր խմբային անվանացանկով արտադրանքի օգտագործման հիմնական ուղղությունները։ Ընդհանուր առմամբ արտադրության միջոցների մեծածախ առևտրի ծավալումն ավելորդ է դարձնում արտադրողների միջև ֆոնդերի բազմակի բաշխման անհարկի աշխատանքները։

Իրականում գրեթե անհնար է արտադրության պլանների ծավալուն անվանացանկը մանրամասն շաղկապել նյութատեխնիկական մատակարարման պլանների հետ։ Ներկայումս միավորումների, ձեռնարկությունների տնտեսական ինքնուրույնության զուգակցումը նյութական ռեսուրսների կենտրոնացված պետական բաշխման հետ հնարավոր է իրագործել տնտեսական պայմանագրերով նախատեսվող մատակարարումների պլանի կատարման հիման վրա։ ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի տնտեսական մեխանիզմի կատարելագործման մասին որոշմամբ նախատեսվում է, որ արտադրական միավորումների, ձեռնարկությունների արտադրատնտեսական գործունեության արդյունքների գնահատումը, նյութական խթանումը պետք է իրականացվի ելնելով առաջին հերթին արտադրանքի մատակարարումների պլանի կատարումից՝ կնքված տնտեսական պայմանագրերին (կարգագրերին) համապատասխան տեսակներով (անվանացանկով) և նշված ժամկետներում[17]։ Այս պայմաններում մատակարարումների պլանի կատարումը դառնում է նյութատեխնիկական մատակարարման մարմինների գործունեության գնահատման հիմնական չափանիշ։ 1967—1980 թթ. մեր հանրապետության պետմատի համակարգի մեծածախ ապրանքաշրջանառության կառուցվածքի փոփոխությունները բնութագրվում են բերված աղյուսակի տվյալներով։

Հանրապետության պետմատի մեծածախ ապրանքաշրջանառության մեջ ընդգրկված է ինչպես ժողովրդական տնտեսության պլանի, ՍՍՀՄ պետպլանի անվանացանկի, այնպես էլ ՍՍՀՄ պետմատի անվանացանկի արտադրանքը։ Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, ՀՍՍՀ պետմատի մեծածախ ապրանքաշրջանառության մեջ քննվող ժամանակաշրջանում պահեստային շրջանառության ծավալը ավելի քան կրկնապատկվել է։ Զգալիորեն ավելացել է արտադրության միջոցների վաճառքը մանրամեծածախ խանութների միջոցով։ 1980 թ. մանրամեծածախ իրացումը ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ հասել է 3,9%-ի, որն այսօրվա դրությամբ չի բավարարում տնտեսության զարգացման պահանջները։

Հասարակական արտադրության զարգացման, գիտատեխնիկական առաջընթացի արագացման և տնտեսական կապերի ընդլայնման, խորացման

---

17 «Պլանավորումը բարելավելու և արտադրության արդյունավետության ու աշխատանքի որակի բարձրացման վրա տնտեսական մեխանիզմի ներդրությունն ուժեղացնելու մասին», Երևան, 1980, էջ 50։

ու բարդացման պայմաններում կարևոր նշանակություն ունի արտադրության միջոցների բաշխման և շրջանառության կատարելագործման պրոբլեմը։ Արտադրության միջոցների մեծածախ առևտրի զարգացումը հարկ է դիտել որպես հիշյալ պրոբլեմի լուծման անհրաժեշտ ուղիներից մեկը։ Մեծածախ առևտրի զարգացումը ծառայում է ապրանքադրամական հարաբերությունների ընդլայնմանը, տնտեսական հաշվարկի ամրապնդմանը և նյութական շա-

ՀՍՍՀ պետմատի համակարգի մեծածախ ապրանքաշրջանառության կառուցվածքը 1967—1980 թթ. (տոկոսով)[18]

ապրանքաշրջանառության տարատեսակները	1967 թ.	1970 թ.	1975 թ.	1977 թ.	1978 թ.	1979 թ.	1980 թ.
ընդամենը տրանզիտ	88,7	86,1	76,1	75,9	75,8	75,6	76,6
ա) միջոցների մասնակցությամբ	1,3	1,8	11,6	12,4	12,7	13,4	10,8
բ) առանց միջոցների մասնակցության	87,4	84,3	64,5	63,5	63,1	62,2	65,8
ընդամենը պահեստային շրջանառություն	11,3	13,9	23,9	24,1	24,2	24,4	23,4
ա) իրացումը պահեստներից և բազաներից	—	11,9	18,9	19,5	20,8	20,1	18,4
բ) իրացումը մանրամեծածախ խանութներից	—	2,0	3,1	3,5	2,2	3,0	3,9
գ) ապրանքների ներսիստեմային բացթողումը պահեստներից և խանութներից	—	—	1,9	1,1	1,2	1,3	1,1
ամբողջ մեծածախ շրջանառությունը	100	100	100	100	100	100	100

հագրգռվածության ու պատասխանատվության բարձրացմանը։ Արտադրության միջոցների մեծածախ առևտուրն ակնհայտ առավելություններ ունի արտադրանքի կենտրոնացված ֆոնդային մատակարարման նկատմամբ։ Այն հնարավորություն է տալիս արագացնելու արտադրանքի իրացման պրոցեսը։ ժամանակին ու լրիվ բավարարելու սպառողների պահանջները։ Արտադրանքի բաշխումը կատարվում է տեղերում՝ նյութատեխնիկական մատակարարման տերիտորիալ մարմիններում, հետևապես ավելորդ են դառնում հայտերի կազմման, ներկայացման, կարգագրերի իրեցման աշխատանքները։ Սպառողն արտադրության վրա ազդելու ավելի մեծ հնարավորություն է ունենում, քանի որ փոխհարաբերությունների հիմքում ընկած են լինում պատվերները։

Արտադրության միջոցների մեծածախ առևտրի դեպքում մատակարարումներն իրականացվում են համաչափ, ներկայացված պատվերներին համապատասխան, ուստի ավելորդ են դառնում անմիջականորեն արտադրական միավորումներում, ձեռնարկություններում արտադրական պաշարների կուտակումները, կրճատվում են ամբողջական պաշարների չափերը և շրջանառության ծախքերը։ Արտադրության միջոցների մեծածախ առևտրի պայմաններում լայն հնարավորություններ են ստեղծված ապրանքային ռեսուրսներով մանևրելու, անհրաժեշտ ռեզերվներ ապահովելու, արտադրանքի, հումքի և նյութերի արտադրական տեսականին սպառողականի վերածելու համար։

18 Հաշվարկները կատարված են մեր կողմից, ՀՍՍՀ պետմատի համակարգի տարեկան հաշվետվությունների տվյալների հիման վրա։

Արտադրության միջոցների մեծածախ առևտրի հետագա զարգացումը պահանջում է ըստ ամենայնի ուսումնասիրել ժողովրդական տնտեսության պահանջները կոնկրետ արտադրատեսակների նկատմամբ, կատարելագործել պլանավորման բալանսային մեթոդն այն հաշվով, որպեսզի արտադրանքի բնական ու արժեքային ցուցանիշները համապատասխանեցվեն, արտադրության պլանները լրիվ համընկնեն առանձնացված նյութական ռեսուրսներին, ընդլայնվի այն արտադրանքի անվանացանկը, որը նախատեսվում է իրացնել մեծածախ առևտրի միջոցով։

НЕОБХОДИМОСТЬ И СУЩНОСТЬ ОПТОВОЙ ТОРГОВЛИ СРЕДСТВАМИ ПРОИЗВОДСТВА

РАДИК МИРЗОЯН

Резюме

Одной из прогрессивных форм материально-технического снабжения является оптовая торговля средствами производства, переход к которой предполагает использование новых форм и методов поставок продукции производственно-технического назначения, основанных на государственных планах развития народного хозяйства и соответствующих современным условиям экономического развития.

Рассмотрение существующих в литературе точек зрения по этим вопросам приводит к выводу, что поставки по прямым длительным хозяйственным связям происходят в условиях денежного обмена в сфере товарного обращения. Следовательно, эти связи полностью относятся к оптовой торговле как таковой.

Следует четко разграничивать понятия «товарное обращение средств производства» и «оптовая торговля средствами производства».

Поставки средств производства территориальными органами материально-технического снабжения уместно назвать «бесфондовой реализацией средств производства». Основная экономическая предпосылка ее развития—сбалансированность общего объема материальных ресурсов и имеющихся в них потребностей.

Развертывание и совершенствование оптовой торговли средствами производства в основном направлены на развитие инициативы и расширение прав потребителей с тем, чтобы полностью удовлетворялись их потребности в продукции необходимого количества, ассортимента и качества.